ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

№ - _____

«_____» _____ 2021 թ.

✉ ՀՀ քաղաք Երևան 0009, Կորյուն փող. 15 , կայք՝ http://www.ecoinspect.am/

☎ հեռ. (015) 48-88-84 , Էլ. փոստ՝ armen.lablajyan@ecoinspect.gov.am

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
Շուշան Դոյդոյանին
(ք. Երևան, Փ. Բուզանդի փողոց, 1/3, 4-րդ հարկ, foi@foi.am)

Հարգելի Շուշան Դոյդոյան,

Ձեր՝ 2021 թվականի դեկտեմբերի 07-ի հ.459519 էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով ստացված հարցման վերաբերյալ հայտնում եմ, որ Երևան քաղաքի, Սիլիկյան հին խճուղու 60/1 հասցեի հարևանությամբ գտնվող «Միքայել Ղազարյան Սերգեյի» ԱՁ (այսուհետ՝ Ձեռնարկատեր) տնտեսվարողի քարի վերամշակման արտադրամասը գործում է 2007 թվականից: Քանի որ Ձեռնարկատերը զբաղվում է միայն հանքանյութի վերամշակմամբ և արտադրամասը շահագործում է 2007 թվականից, ուստի նրա վրա տարածվում է 1995 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, որով նշված գործունեությունը ենթակա չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Հարգանքով՝
Երևանի տարածքային բաժնի պետի՝
պարտականությունները կատարող՝ Ա. Գրիգորյան

Կատարող՝ Խ. Հարությունյան
Հեռ. 015 488 884